

**Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ**

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ  
Գլխակենտ, Օհայո



**REV. FR. DIRAN PAPAZIAN**  
**PASTOR**

Area Code 216—Tel. 381-6590

**ST. GREGORY OF NAREK**

**ARMENIAN CHURCH**

666 Richmond Road  
Cleveland, Ohio 44143, U.S.A.

5 Մարտ, 1974

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,  
Առաջնորդ,  
ի սիւ Եղորկ, Ն.Ե.,

Առաջնորդ Սրբազն Հայր,  
Կիրակի, Յ Մարտ, 1974-ին, յաւարտ Եկեղեցւոյ արարողութեանց, ժամը 1.00-ին յ.մ., կայացաւ Ծիական մասնայատուկ ժողով մը, մեր Մշակութային սրահին մէջ, Առաջնորդին Հրահանգով, եւ Հովովին նախագահութեամբ ու 25 ծիականներու մասնակցութեամբ, Օրակարգի Վրայ ունենալով միակ հարց մը, այն է ընտրութիւն Ծիական Խորհուրդի, Ընտրական Յանձնախումբի եւ Հաշուեքննիչ Յանձնախումբի:

Յետ նախապատրաստական աշխատանքներու, ինչպէս բացման աղօթք, ներկայութեան ստուգում եւ բացատրութիւն ժողովի բնոյթին մասին, եւ ապա ներկայութեան մեծամասնութեան գոյաւորման հաստատում, համաձայն մեր կանոնագրութեան 17-րդ յօդուածի տրամադրութեան, ընթացք տրուեցաւ ընտրութեան գործին:

Ընտրութիւնը կատարուեցաւ գաղտնի քուէարկութեամբ, Ընտրական Յանձնախորհի բերած թեկնածուներու ցանկին Վրայ, համաձայն մեր Կանոնագրութեան 21-րդ յօդուածին: Մեր կողմէ նշանակուած զոյզ մը քուէախոյզներու քննութեամբ հաստատուեցաւ քուէաթկութեան արդիւնքը զոր կը ներկայացնենք ձերդ Սրբազնութեան, ինդրելով ընտրութեան շուտափոյթ վաւերացումը, նկատելով որ ժողովը գումարուած է օրինաւորութեան սահմաններուն մէջ, համաձայն մեր Առաջնորդարանի Կանոնագրութեան տրամադրութեանց:

Ժողովը սպառելով օրակարգի իր միակ հարցը, փակման աղօթքով Վերջ գտաւ ժամը 1.45-ին:

Ընտրութեան արդիւնքը հաճեցէք ունենալ ստորեւ:

**Ծիական Խորհուրդ**

Նուպար Ապտալեան	25	քուէ
Գէորգ Արսլանեան	25	,,
Նազարէթ Միքայելեան	25	,,
Ռաֆիկ Զաքըրեան	25	,,
Քրոս Պաղտասարեան	25	,,
Գրիգոր Երանեան	23	,,

**Ընտրական Յանձնախումբ**

Փոլ Արսլանեան	25	քուէ
Միքայ Պաղտասարեան	24	,,
Ալիս Պաղտասարեան	24	,,
<b>Հաշուեքննիչ Յանձնախումբ</b>		
Ռիշարտ Արսլանեան	25	քուէ
Ճորճ Սագեան	25	,,
Կրէյս Արսլանեան	25	,,

Մամամբ Խոնարհ Աղօթքակից՝ Տ. Ա. Փափազեան ք. Փափազեան